Կարգապահական գործ թիվ ԿԳ-24172

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՄԼԵՏ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ և Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Վարսենիկ Մանուկյանի,

քննության առնելով փաստաբան **Համլետ Սերյոժայի Զաքարյանի (այսուհետև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1143), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Վարսենիկ Մանուկյանը (**այսուհետև՝ Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետև՝ Պալատ**), տեղեկացրել է, որ կնքել է փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիր (**այսուհետև՝ Պայմանագիր**) փաստաբան Համլետ Զաքարյանի հետ: Պալատին հայտնել է, որ իր դատական գործով առաջին նիստը տեղի է ունեցել 2024 թվականի գարնանը, խնդրել է Փաստաբանին, որ բժշկական փաստաթղթերը և ուրիշ այլ փաստաթղթերը ներկայացնի դատարան: Փաստաբանը դրանք դատարան չի ներկայացրել և հարցրել է Դիմողին, թե Դիմողը կարող է ապացուցել, որ իր դստերը Գեղամն է հարվածել:

Դիմողը նշել է, որ Փաստաբանը միշտ պաշտպանել է հակառակորդ կողմին, չի

թիվ ԿԳ-24172-2-Ա
15.01.2025թ.

թույլատրել իրեն ՀՀ դատախազություն նամակ ուղարկել, իր շահերը երբեք չի պաշտպանել:

Դիմողը հավելել է, որ փաստաբան Համլետ Զաքարյանը 15-օրյա սահմանված ժամկետում չի կատարել անհրաժեշտ գործողությունները: Չի ներկայացրել ապացույցներ դատարանին, որոնք էական նշանակություն ունեն իրենց որպես տուժողների շահերի պաշտպանության համար:

Պայմանագիրը լուծվելուց հետո Փաստաբանն իրեն հանձնված փաստաթղթերի մի մասը չի վերադարձրել, չի վերադարձրել հոնորարի այն մասը, որի դիմաց աշխատանք չի կատարել:

Բացատրությանը կից ներկայացրել է Փաստաբանի հետ կնքված Պայմանագիր, որով Փաստաբանը պարտավորվել է Դիմողին մատուցել իրավաբանական ծառայություններ՝ քրեական գործով իրավաբանական օգնություն դատաքննության փուլում: Պայմանագրի գինը կազմել է 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի վրա առկա է եղել նշում, որ վճարվել է 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը: Բացատրությանը կից նաև ներկայացրել են քրեական վարույթի նախաքննության փուլի որոշակի նյութերի պատճենները:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.11.2024 թվականին Դիմողին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն վերջինս որևէ բացատրություն չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Համլետ Զաքարյանին առաջարկվել է Օրենքի 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Վարսենիկ Մանուկյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 04.11.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 21.11.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 13.02.2024թ. Դիմողի հետ կնքել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: Իրավական օգնություն ցուցաբերելու ընթացքում պարզվել է, որ ՀՀ ՔԿ Մասիսի քննչական բաժնում 19.07.2022թ. նախաձեռնած և քննվող թիվ 44110922 քրեական վարույթի նյութերը

ուղարկվել են դատարան: Նույն ժամանակ, նշված վարույթից մի մաս է անջատվել, որը շարունակվել է քննվել Մասիսի քննչական բաժնում:

Դիմողը նշված վարույթով հանդիսացել է տուժող, իսկ Փաստաբանը 14.02.2024թ. ներգրավվել է որպես նրա ներկայացուցիչ:

Փաստաբանը նշել է, որ Դիմողի ոչ պարկեշտ պահվածքի պատճառով Փաստաբանի նախաձեռնությամբ 2024թ. հունիսին պայմանագիրը փաստացի լուծվել է, սակայն Դիմողը հրաժարվել է ստորագրել պայմանագրի լուծման վերաբերյալ որևէ փաստաթուղթ:

Փաստաբանը անդրադարձել է Դիմողի պնդումներին և նշել, որ իր համար անհասկանալի է թե ինչ ապացույցների մասին է խոսքը գնում, որոնք դատարան չեն ներկայացվել: Փաստաբանի պնդմամբ, չի եղել այնպիսի վարույթային որոշում, որը անհրաժեշտ է եղել տասնհինգօրյա ժամկետում բողոքարկել:

Վերոգրյալի հիման վրա Փաստաբանը գտնում է, որ բացակայում են իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 27.09.2024թ. թիվ 371-Ա/ԿԳ-24172 որոշմամբ փաստաբան Համլետ Զաքարյանի նկատմամբ **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետև՝ Կանոնագիրք) 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.8.4(3)** ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

04.10.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Գարիկ Հախնազարյանին (**այսուհետև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 04.12.2024թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 04.12.2024թ.:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-2-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 15.01.2025թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Ա/Ձ Համլետ Զաքարյանի և Վարսենիկ Մանուկյանի միջև 13.02.2024թ. կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ *Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել իրավաբանական ծառայություններ, այն է՝ քրեական գործով իրավաբանական օգնություն դատաքննության փուլում:*

Միաժամանակ սույն կարգապահական վարույթի շրջանակներում չեն հաստատվել հետևյալ փաստերը.

- *Քրեական գործով մինչդատական փուլում Փաստաբանի կողմից Դիմողի իրավունքների պաշտպանություն ստանձնելու փաստը:*
- *Փաստաբանի կողմից Դիմողի փաստաթղթերը չվերադարձնելու փաստը:*

Սույն կարգապահական գործի շրջանակներում ոչ վերաբերելի կամ անթույլատրելի ապացույցներ առկա չեն:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Համլետ Զաքարյանը փաստաբան է հանդիսանում 22.11.2010թ. և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում ունի 1 կարգապահական տույժ, որը մարված չէ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Համլետ Զաքարյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.8.4(3) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և*

փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններ իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս համատեքստում, Կանոնագրքի մի շարք դրույթների կիրառելիությունը ևս ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կողմից այդ դրույթներով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների համատեքստում փաստաբանի վարքագծի քննարկման իրավական հնարավորությունն ուղղակիորեն փոխկապակցված է որոշակի պայմանների առկայության կամ բացակայության հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

<u>7.1 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի խախտման մասով</u>.

Տվյալ դեպքում, Դիմողն ըստ էության Փաստաբանին վերագրում է Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու վարքագիծը:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ, փաստաբանի վարքագծի կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից, բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Ավելին, տրված հանձնարարության շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ փաստաբան Համլետ Զաքարյանը 13.02.2024թ. կնքված Պայմանագրի հիմա վրա ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը՝ քրեական գործով դատաքննության փուլում իրավաբանական օգնություն ցուցաբերելու շրջանակներում:

Կարգապահական վարույթի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ Դիմողը հայտնել է դիրքորոշում, որ նշված քրեական գործով տեղի է ունեցել մեկ նախնական դատական նիստ, որի ընթացքում Փաստաբանը չի կատարել որևէ գործողություն, որը բացասաբար է անդրադարձել գործի վրա: Բացի այդ, Դիմողը նշել է, որ հիշատակված քրեական գործով դատական նիստերը երկու անգամ հետաձգվել են, բայց ոչ Փաստաբանի պատճառով: Վերջինիս պնդմամբ, հաջորդող դատական նիստին արդեն ներկա է գտնվել նոր փաստաբանը, քանի որ Համլետ Զաքարյանի հետ փաստացի լուծվել է պայմանագիրը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ ցանկացած դեպքում հանձնարարության բարեխիղճ կատարման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը փոխկապակցված է դրանց արդյունավետության հետ: Ընդ որում, հաշվի առնելով փաստաբանի իրավապաշտպան առաքելությունը և համապատասխան իրավունքի իրացման անհրաժեշտ և օգտավետ գործողությունների կատարման կարևորությունը՝ փաստաբանն իր վստահորդին ցուցաբերելով բարեխիղճ իրավաբանական օգնություն պարտավոր է ոչ միայն ուսումնասիրել գործի նյութերը, կազմել և դատարան ներկայացնել անհրաժեշտ դատավարական փաստաթղթերը, այլև անձամբ մասնակցի նշանակված դատական նիստերին:

Տվյալ դեպքում, Փաստաբանը մասնակցել է քրեական գործով տեղի ունեցած նախնական դատական նիստին և չի դրսևորել Օրենքին կամ Կանոնագրքին հակասող վարքագիծ, ուստի Դիմողի շահերի պաշտպանության համար կատարել է բոլոր գործողությունները, որոնք այդ ժամանակահատվածում անհրաժեշտ են եղել վերջինիս իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Ինչ վերաբերում է Դիմողի պնդմանն առ այն, որ Փաստաբանը տասնհինգօրյա ժամկետում չի բողոքարկել քննիչի որոշումը, ապա հարկ է նշել, որ քննվող երկու գործերից Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը բացառապես դատական փուլում, ուստի՝ առանձնացված, մինչդատական փուլում քննվող քրեական գործով որևէ գործողության մասնակցության, ինչպես նաև վարույթային որոշումների բողոքարկման որևէ պարտականություն և պայմանագրային պարտավորություն չի ունեցել:

Ողջ վերոնշված հանգամանքների հիման վրա Հանձնաժողովը եզրահանգում է կատարում առ այն, որ **չի հիմնավորվել փաստաբանի վարքագծում Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերով սահմանված պահանջների խախտման առկայությունը:**

Կանոնագրքի 3.8.4(3) ենթակետերի խախտման մասով Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 3.8.4(3) ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):*

Վկայակոչված կանոնների վերլուծության արդյունքում պարզ է դառնում նաև, որ վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի վստահորդի փաստաբանի համար սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք ենթակա են կատարման ինչպես հանձնարարության կատարման ընթացքում, այնպես էլ դրա ավարտին՝ պայմանագիրը լուծելուց հետո վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը:

Տվյալ դեպքում, ինչպես Փաստաբանի 21.11.2024թ. ներկայացրած բացատրությամբ, այնպես էլ կարգապահական նիստի ընթացքում Դիմողի արտահայտած դիրքորոշումից պարզ է դառնում, որ Փաստաբանը էլեկտրոնային տարբերակով տրամադրել է Դիմողին քրեական գործի նյութերը:

Բացի այդ, Դիմողը չի ներկայացրել ապացույց և տեղեկություն առ այն, թե ի՞նչ փաստաթղթեր է տրամադրել փաստաբանին, որ վերջինս չի վերադարձրել: Ավելին, Դիմողը կարգապահական նիստի ընթացքում պնդել է, որ նոր փաստաբանը որևէ փաստաթուղթ իրենից չի պահանջել, քանի որ դրանք էլեկտրոնային տարբերակով հասանելի են վերջինիս

և անհրաժեշտության դեպքում փաստաթղթերը կարող է ստանալ վարույթ իրականացնող մարմնից:

Փաստաբանն, իր հերթին, նշել է, որ իր մոտ առկա բոլոր նյութերը տրամադրվել են Դիմողին, իսկ վերջինս հակառակը հավաստող որևէ ապացույց չի ներկայացրել:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննությամբ չի ապացուցվել Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու և պայմանագիրը լուծվելուց հետո Փաստաբանին հանձնված փաստաթղթերը Դիմողին ամբողջությամբ չվերադարձնելու վարքագիծը: Հետևաբար Դիմողը, որպես Պատասխանողի ենթադրյալ ոչ իրավաչափ վարքագիծն ապացուցելու պարտականություն ունեցող կողմ, պետք է կրի հավելյալ ապացույց չներկայացնելու բացասական հետևանքը, իսկ չփարատված կասկածները պետք է որակվեն ի շահ Պատասխանողի:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Համլետ Սերյոժայի Զաքարյանի (արտոնագիր՝ թիվ 1143) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.8.4(3) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24172 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-24172-2-Ա
15 հունվարի 2025թ.
ք.Երևան